ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք,
Հեռ. 4-74-88 , tcaxkunq@yandex.ru

N 92
17 սեպտեմբեր 2015թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐԱՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ի կատարումն <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2015թվականի սեպտեմբերի 15-ի<<2016թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն՝ ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 36-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է , որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tcaxkunq@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 36-Ն

2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <Տեղական Տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք համայնքի ավագանու 2015թվականի
սեպտեմբերի 15-ի թիվ 36-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ	ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝		
հիմնական օբյեկտների համար՝		
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ ----------	մինչև 15000դրամ	15000դրամ
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝		
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝----------	մինչև 30000դրամ	25000դրամ
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝----------	մինչև 50000դրամ	40000դրամ
բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝----------	մինչև 70000դրամ	50000դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝		
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ----------	մինչև 3000դրամ	2000դրամ
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝----------	մինչև 5000դրամ	3000դրամ
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ----------	մինչև 3000դրամ	3000դրամ
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար ----	մինչև 5000դրամ	5000դրամ
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝		
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ----------	0-ից 17.500դրամ	5000դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝----------	1.500-ից 17.500դրամ	5000դրամ

5. Համայնքի տարածքում՝ ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝	350դրամ	350դրամ
բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար -----	150.000-200.000դրամ	170.000դրամ
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ ա) առևտրի օբյեկտների համար՝ ----------	25.000-50.000դրամ	25.000դրամ
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ----------	50.000-100000դրամ	70.000դրամ
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ ----------	200.000-500.000դրամ	300.000դրամ
դ) խաղատների կազմակերպման համար՝ ----------	500.000-1.000.000դր.	700.000դրամ
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝----------	250.000-500.000դրամ	300.000դրամ
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ ----------	100.000-150.000դրամ	100.000դրամ
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------	1000-2000դրամ	1000դրամ
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------	2500-3500դրամ	2500դրամ
գ) այլ արտաքին գովազդի համար՝ ----------	500-1500դրամ	1500դրամ
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ ----------	700դրամ	700դրամ
• ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ		
ա)համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.----------	----------	2000դրամ
բ)տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.----------	----------	2000դրամ
գ)տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.	----------	5000դրամ